## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յունիսի: Երկրագործութեան և գիւղական արդիւնաբերութեան բաժնի տեղեկութիւնների համեմատ հունձի վրա հետևեալ յոյսերը կան. Գերմանիայի մէջ հունձը ընդհանրապէս բաւականացուցիչ է, Աւստրիայի մէջ միջակ, Ունգարիայի մէջ սպասում են լաւ հունձի, բայց ցորենը երևի անցեալ տարվանից պակաս կը լինի, Ֆրանսիայի մէջ սպասում են լաւ հունձի, Իտալիայի մէջ հունձը լաւ է, Անգլիայի մէջ հունձը բաւականացուցիչ է, Միացեալ Նահանգների հաւանական հունձը լինելու է 410 միլիօն բուշել, մի քանիսի կարծիքով ցորենը լինելու է 420—430 միլիօն բուշել, մինչդեռ անցեալ տարի եղել է 520: Ամերիկացի վաճառականները յոյս ունեն բաւական հաց ունենալ արտահանելու համար: Ընդհանրապէս ամեն տեղ դուցէ բացի Ունգարիայից սպասում են ամենաբարձր հունձի համեմատաբար 1882 թուականի հետ:

ԿՐՕՆՇՏԱՏ, 28 յունիսի: Այսօր Բարձրագոյն ներկայութեամբ կայացաւ նաւախաղ, որին մասնակցում էին 10 նաւեր: Թագաւոր կայսրը խաղը սկսեց Ծովակետական „Աֆրիկա“ նաւից, յետոյ նայեց միւս նաւերը, որոնք վերադարձել էին հեռաւոր ճանապարհորդութիւնից, իսկ յետոյ նայեց „Ստրելոկ“ նաւը, որ այսօր արտասահման է գնում: Թագաւորը մանրամասն քննում էր իւրաքանչիւր նաւը: „Դերժավա“ նաւի վրա սպասում էին թագաւորին դումայի ձայնաւորները և արհեստաւորների պատգամաւորները նշաններով: Քաղաքագլուխը ներկայացրեց Նոցա Մեծութիւններին ոսկեջրած սկուտեղի վրա աղ և հաց, իսկ թագուհուն փունջ: Իր ճառով քաղաքագլուխը յիշեցրեց Թագուհուն, թէ Կրօնշտատը առաջին քաղաքն էր, որ 1866 թուականին Թագուհու Ռուսաստան հասնելու ժամանակ բաղդաւորութիւն ունեցաւ նրան ողջունելու: Արհեստաւորների առաջնորդը Թագուհուն խաչվառ ներկայացրեց: Երեկոյեան ժամի սկզբին Թագաւորը նշանով շնորհակալութիւն յայտնեց նաւատորմին և յետոյ Նոցա Մեծութիւնները բարեհաճեցին Պետերգօֆ ուղևորվել:

ՕԴԷՍՍԱ, 28 յունիսի: Այստեղ հասաւ „Րօսիա“ նաւը առաջին հունձի թէյի բեռնով: Նաւը անցաւ Պորտ-Սայիդ առանց յարաբերութիւն ունենալու ափի հետ, ուստի չենթարկվեցաւ կարանտինի:

ԼՕՆԴՕՆ, 28 յունիսի: Համայնքների ժողովի մէջ Ֆիցմօրիս յայտնեց, որ բացի 1881 թուականի ռուս-պարսկական սահմանական դաշնագրից, Անգլիային յայտնի չէ Ռուսաստանի և Պարսկաստանի որ և է մի նոր դաշնագիր:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յունիսի: Յայտնված են Բարձրագոյն հրամաններ նշանաւոր տօնավաճառների առևտուրը հարկի ենթարկելու մասին, սենատի ընդհանուր ժողովների կազմակերպութեան և գործավարութեան կարգի փոփոխման և պետական բանկի մէջ կալուածատէրերի սօլօ մուրհակները ընդունելու մասին: Հաղորդված լուրը բանկային գործիչներին ընծաներ տալու մասին պաշտօնապէս հաստատվում է: Կադետների երկրորդ կօրպուսի մէջ մանկավարժական կուրսերը փակվում են և նրանց վերաբերեալ կանօնները ոչնչացնվում են: „Новости“ լրագրի հաղորդած լուրը Բուխարայի զօրքերի մէջ ռուսաց համազգեստի և հրամանատարութեան ռուսաց եղանակի մտցնելու մասին անհիմն է: Յունիսի 26-ից սկսված է կանօնաւոր հաղորդակցութիւն Նիկօլսկի երկաթուղու և Պուտիլօվսկի նաւահանգստի մէջ:

ՌԻԲԻՆՍԿ, 29 յունիսի: Յունիսի 27-ին բացվեցաւ գիւղատնտեսական աշխարհահանդէս, որին ներկայացան բազմաթիւ մասնակցողներ:

ՓԱՐԻԶ, 29 յունիսի: Արտաքին գործերի մինիստր Շալմել-Լակուր յայտնեց, որ Ֆրանսիան կը գրաւէ միայն Կարմիր գետի ներքին մասերը, իսկ ամբողջ Անամի նուաճումն աչքի առաջ չունի, որ Չինաստանը թշնամական դիտաւորութիւններ չունի, բայց եթէ նա կը հետևի չարամիտ խորհուրդների և պատերազմ կը յայտնի, պատգամաւորների ժողովը կը կարողանայ պաշտպանել երկրի շահերը և որ Ֆրանսիան Չինաստանին դաշնագրութիւն է առաջարկում սահմանների փոխադարձ ապահովութեան մասին և յոյս ունի, որ բանակցութիւնները կաջողվեն: Պատգամաւորների ժողովը 371 ձայների բազմութեամբ 86-ի դէմ հաւանութիւն ընծայեց կառավարչական քաղաքականութեանը:

ԼՕՆԴՕՆ, 29 յունիսի: Որովհետև երեսունական թուականներին ապացուցված է կարանտինների անաջողութիւնը, մտադրութիւն կայ կասկածաւոր նաւերը ենթարկել բժշկական քննութեանը և առողջացնող միջոցների: Հնդկաստանից եկող շոգենաւերը, որոնք անցնում են Սուէզի ջրանցքից առանց կանգնելու վարակված տեղերում, կասկածաւոր չեն համարվում: Կասկածաւոր չեն նոյնպէս և Ալէքսանդրիայից անցնող նաւերը, բացի այն դէպքից, երբ նաւի վրա խօլերայով մէկը հիւանդանում է: Չինաստանի մէջ խօլերա յայտնվելու մասին լուրը չէ հաստատվում: Պարլամենտական մասնաժողովը կարծիք յայտնեց Լամանշի տոննելի կառուցման դէմ: Լեսսեպսի հետ համաձայնութիւն կայացաւ Սուէզի երկրորդ ջրանցքի կառուցման մասին:

ՎԱՐՇԱՎԱ, 30 յունիսի: Այս գիշեր դատավճիռ կայացվեցաւ Սադօվսկու և դռնապան Մատկօվսկու գործի մասին: Նրանցից առաջինը մեղադրվում է մարդասպանութեան համար իր հարազատ տատ պառաւ Պեստրօվսկուն և նրա ազգական օրիորդին կողոպտելու նպատակով, իսկ վերջինը այդ յանցանքին մասնակցելու համար: Սադօվսկի դատապարտված է 20 տարվայ, իսկ Մատկօվսկի 15 տարվայ տաժանակիր աշխատանքների:

ԲԵՐԼԻՆ, 30 յունիսի: „Nord. Deut. Allg. Zeitg“ լրագիրը հաղորդում է, որ իշխան Օրլօվի տեսակցութիւնը իշխան Բիսմարկի հետ չը կայացաւ, որովհետև վերջինի խանգարված առողջութիւնը կատարեալ հանգստութիւն է պահանջում, թէպէտ գերմանական կանցլերին շատ հաճելի կը լինէր իր ռուս բարեկամի հետ տեսակցութիւնը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յունիսի: Վաշինգտօնից ստացված տեղեկութիւնների համեմատ ցորենի հունձը Հիւսիսային Ամերիկայի մէջ չափազանց առատ է: Ձմեռը ցանված ցորեն հաւաքված է 300 միլիօն բուշել, իսկ գարու և վարսակի հունձը անցեալ տարվանից աւելի չէ: Լուր է տարածված, որ յուլիսի սկզբին դանիական թագաւորը հասնելու է Ս. Պետերբուրգ: Երէկ տօնեցին Պետրօպավլօվսկի մայր-եկեղեցու 150 ամեակը: Բազմաթիւ ուխտաւորներ կային, որոնց թւում և մի քանի բարձրաստիճան անձինք: Պատարագից յետոյ քարոզ ասվեցաւ գլխաւորապէս եկեղեցու պատմութեան վերաբերեալ: Քարոզի վերջը քարոզողը հրաւիրեց աղօթողներին յիշատակել Ս. Պետերբուրգի մեծ հիմնողին: Լրագիրները հաղորդում են, որ դաշտային գլխաւոր նախկին ինտենդանտ տայնի սօվետնիկ Րօսիցկու գործը կը քննվի այստեղ զինուորական-նահանգական դատարանի մէջ սեպտեմբերին:

ԼՕՆԴՕՆ, 30 յունիսի: Երէկ համայնքների ժողովի մէջ Գլադստօն յայտնեց, որ Ֆրանսիական ծովակետը Մադագասկար կղզու վրա հրամայեց անգլիական հիւպատոսին, Տամատավա քաղաքի մէջ, հեռանալ 24 ժամվայ ընթացքում, բայց մինչև այդ ժամանակամիջոցի լրանալը հիւպատոսը վախճանվեցաւ: Ֆրանսիացիները ընդհատեցին յարաբերութիւնները բրիտանական զինուորական նաւի և ափի հետ, հրամայեցին իջեցնել բոլոր օտար հիւպատոսների դրօշակները, կալանաւորեցին անգլիական հիւպատոսի քարտուղարին և անգլիական միսիօնարին: Վերջը Գլադստօն ասեց, որ Ֆրանսիայից աւելի մանրամասն տեղեկութիւնների է սպասում:

ՎԻԷՆՆԱ, 30 յունիսի: Վադդինգտօն ֆրանսիական դեսպան նշանակվեցաւ աւստրիական կառավարութեան մօտ:

ԼՕՆԴՕՆ, 30 յունիսի: Սուէզի երկրորդ ջրանցքի մասին կայացաւ հետևեալ համաձայնութիւնը: Ջրանցքը այժմեան ջրանցքին մօտաւորապէս զուգահեռական պէտք է լինի և վերջանայ մինչև 1888 թուականը: Տարիֆը պէտք է հետզհետէ փոքրանայ: Նաւագնացութեան փոխ-նախագահը և գլխաւոր տեսուչը պէտք է անգլիացիներ լինեն: Ջրանցքի փորելու համար հարկաւոր 8 միլիօն ֆունտ ստերլինգ Անգլիան է տալիս:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 յուլիսի: Զինուորական խորհուրդը որոշեց, զինուորականներին իրաւունք տալ 20 օրվանից աւելի տեւողական արձակուրդ ունենալ երկու տարին մի անգամ քաղաքական ծառայողների նման:

ՎԻԼՆՕ, 1 յուլիսի: Յունիսի 30-ին գիշե-

---

նութեան և շահեստի զարգացմանը... Պարունակելով իր մէջ համ պարտամուրհական, համ գրաւական արտօնութիւնները (այս է վարրանտի նշանակութիւնը) և չունենալով յենակէտ օրէնսդրութեան մէջ, ո՛վ պիտի որոշէ այն հազար մի տեսակ յարաբերութիւնները, որ պիտի ունենան միմեանց հետ համբարանոցի կառավարչութիւնը, ապրանքատէրը, նրա կրեդիտօրները: Ճշմարիտ է, այժմ էլ պատահում է, որ երկաթուղիների տուած ստացագրերը գրաւ են դնում սրա նրա մօտ, մինչև անգամ այդ ստացագրերը կրեդիտ են գտնում և բանկերում, որովհետև նրանք ոչ այլ ինչ են բայց եթէ նոյն ինքն ապրանքը, գրաւական. եթէ սնանկանում է պարտականը, ստացագիրը իր ձեռին ունեցողը ստանում է լիուլի իր տուած դրամի հատուցումն: Ուրիշ բան է վարրանտը. նա համ ստացագիր է, համ պարտամուրհակ, ուրեմն նրա հատուցումն, երբ կը սնանկանայ ապրանքատէրը, պիտի կատարվի մի այլ կարգ ու կանոնով ոչ ինչպէս պարտամուրհակ և ոչ ինչպէս ստացագիր: Մեր օրէնսդրութեան մէջ դեռ մինչև այժմ չը կան այդ կանօնները, որոնք գտնվում են ֆրանսիական, բելգիական, գերմանական և այլ օրէնսդրութեանց մէջ *):

Անցնենք այլ կէտերին: Մէկ գործարանատէր կամ մի գործարանական ամբողջ ընկերութիւն կարող է վաճառահանել իր արդիւնաբերած մթերքը, և այդ վաճառահանման համար կարող է ունենալ իր սեփական բեռնակրութեան միջոցները, ինչպէս ահա «Եղ. Ն. ընկերութիւնն» էր մինչև այժմ: Այդ երեք օպերացիայի մի ընկերութեան մէջ կենտրօնանալը ապացուցանում է նրա դրամագլխի մեծութիւնը և այն վստահութիւնը՝ որ ունի նա իր գործի վրա: Բայց յայդմանէ, նա՝ աներևոյթապէս՝ գոհացնում է այն յայտնի տնտեսական օրէնքին թէ՝ որքան որ սակաւաթիւ լինեն արդիւնաբերողի և սպառողների մէջ միջնորդները, նոյնքան առևտուրը ձեռնտու կը լինի երկու իսկ կողմի համար էլ: Ունենալ իր ձեռքի տակ բեռնակրութեան միջոցներ—նշանակում է հեռու պահել իր վաճառահանելի ապրանքի առաջարկութիւնը բեռնակրական շահեստի տատանվող առաջարկութիւնից, որը այնքան նշմարելի է երկաթուղիների վրա: Ոչ մի երկաթուղի չէ կարող ամենայն ժամ բաւականացնել ապրանք ուղարկողների պահանջը, վասն զի նրա շարժական կազմածքի քանակութիւնը չափ ու սահման ունի. պատահում է որ ապրանքատէրերը շաբաթներով են սպասում կառքեր ստանալու համար: Բայց երբ մի վաճառականական ընկերութիւն ունի իր սեփական կառքերը, այն դէպքում նրա համար այդ սպասելի օրերը պակասում են: Ահա այն գերազանցութիւնը, որ ունէ այդպիսի ընկերութիւնը իր հետ մրցողների առաջ: Մենք համակրում ենք միանգամայն այդպիսի ընկերութեանը:

Սակայն, գործը այլ գոյն է ստանում, երբ կառքատէր վաճառականական ընկերութիւնը՝ բացի իր ապրանքի բեռնակրութիւնից՝ յանձնառու է լինում հասարակական բեռնակրութեանը: Նա բացի բեռնակրութեան շահից ունի աւելի մեծ և ծանրակշիռ ակնկալութիւն, այն է՝ աշխատել իր սեփական ապրանքը ժամանակին տեղ հասցնելու և ոչ օտար վաճառականինը, յօգուտ իր և ի վնաս մրցողներին... Ոչ ոք ինքը իրան թշնամի չէ կարող լինել և վաղուց է մնացել այն հռչակաւոր ունտերօֆիցերշան, որ ինքն իրան ռոզգով էր պատժում... Եթէ ասենք մի շուկայում պահանջ կայ կերոսինի, դժուար է ենթադրել, որ «Եղ. Ն. ընկերութիւնը» բարձի թողի անի իր կերոսինը և Պօղոսի կամ Թորոսի կերոսինը շուկայ հանի, չէ՞ որ ունտէրօֆիցերշայի օրինակին հետամուտ պիտի լինէր...

Երկաթուղին մենավաճառական ձեռնարկութիւն է, և նրա՝ վաճառականութեան ու շահեստից համար՝ այդ վնասակար բնաւորութիւնը ամոքվում է դոյզն ինչ նրա կանօնադրութիւնով, ըստ որում երկաթուղու ընկերութիւնը պարտաւոր է զանազանութիւն չը դնել ոչ մի ապրանքատէրին, նա պարտաւոր է ուղարկել ապրանքները այն հերթով, որ հերթով մտել են նրանք իր կայարանը: Երբ տալիս էք ձեր ապրանքը երկաթուղու ընկերութեանը դուք քաջ գիտէք ձեր արտօնութիւնները, և գիտէք, որ եթէ «ընկերութիւնը» խանգարի ձեր արտօնութիւններից հէնց մէկը, նա պատասխանատու կը լինի դատարանի առջև: Ձեր այդ վստահութեան առհաւատչեան՝ բարձրագոյն իշխանութեամբ վաւերացրած՝ «ընկերութեան» կանօնադրութիւնն է: Երկաթուղու համար մի և նոյն է՝ ում ապրանքն է նա կրում, պ. Նոբէլինը թէ պ. Սարգիսեանինը,— միայն թէ ուղին բանի: Ուրիշ բան են հանդիսանում «Եղ. Ն. ընկերութեան» ագենտներն ու նաւթակրակառքերը. «ընկերութեան» համար տակաւին նոյնը չէ՝ թէ այս ինչ ժամանակ իր ապրանքներն են յառաջ սլանում թէ պ. Սարգիսեանինը:

Վերը առաջ բերած համակրութիւնները թոյլ են տալի մեզ վերջացնել այս յօդուածը հետևեալ գլխաւոր եզրակացութիւններով:

Ա. «Եղ. Ն. ընկերութիւնը» չէ կարող լինել մի և նոյն ժամանակ՝ համ համբարանոցի տէր, համ ապրանք ղրկող: Իսկ վարրանտի սիստեման գործադրելու համար հարկաւոր է օրէնսդրութիւն, լինի սա տէրութեան համար ընդհանուր օրէնք, կամ մասնաւոր՝ նոյն իսկ հէնց «Եղ. Ն. ընկ.» համար՝ կանօնադրութիւն:

Բ. Երկաթուղիների վրա հասարակական բեռնակրութիւն յանձն առնողը չը պիտի երբէք ձեռնամուխ լինի առևտուրին, և

Գ. Այս ամեն պահանջներին «Եղ. Ն. ընկեր.» չէ կարող բաւականացնել, մինչև որ նա առևտուր է անում նոյն իսկ մթերքով, որի վերաբերմամբ այնքան պարտաւորութիւններ է յանձն առնում:

Գաս. Ե.

---

*) Ֆրանսիա—օրէնք 25 մայիսի 1858 թ.: Բելգիա—18 նոյեմբերի 1862 թ.: Բազէլ—21 մարտի 1864 թ.: Ժնևա—1859 թ.: Սպանիա—1862 թ. և այլն:

